Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ԾՀԾՁԲ-15/9-17/07 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

06 փետրվարի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
նախագահ (ԳԱՊ)՝ Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամներ (ԳԱ)՝ Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝ Դավիթ Գրիգորյան
բացող անդամներ (ԲԱ)՝ Լիլիթ Մաղդեսյան
(ԲԱ)՝ Ջուլիետ Համբարձումյան
քարտուղար՝ (ՄՀՄ) Հայկ Խաչատրյան

Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 100,000,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 03.02.2017թ.-ի ժ 10:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

27.01.2017թ.-ին հայտերի վերաբերյալ ստացվել է հարցադրում և նույն օրը տրամադրվել է համապատասխան պարզաբանում:

Հայտ ներկայացրել են՝

N	Մասնակից	Հասցե
1	«Բևեռային ուղի» ՍՊԸ	ք. Երևան, Մանանդյան 25շ., բն.6
2	Հարմոնիա տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ	ք. Երևան 0015, Պարոնյան 8/8
3	«Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ	ք. Երևան, Մամիկոնյանց 48, 1-ին մ/շ

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները՝

Գնի առաջարկները առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/			
Անվանումը	«Բևեռային ուղի» ՍՊԸ	Հարմոնիա տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ	«Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ

Համակարգչային տեխնիկայի կառավարման և սպասարկման ծառայություններ (12 ամիս)	78,845,600	75,000,000	90,000,000

Մասնակիցների հայտերի գնահատում

Բոլոր մասնակիցների.

- հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.
- հայտերը գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից գնահատվել են բավարար՝ բացառությամբ «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ-ի գնային պայմանների, քանի որ առաջարկված գինը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված նախահաշվային գինը:

Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/9-17/07 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել Հարմոնիա տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին:
Կողմ՝ 3, դեմ՝ 0

2. ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/9-17/07 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին:
Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ 2017թ.-ի փետրվարի 10-ին, ժամը 12:00-ին:
Կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝		Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամ (ԳԱ)՝		Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝		Դավիթ Գրիգորյան
բացող անդամներ (ԲԱ)՝		Լիլիթ Մաղդեսյան
(ԲԱ)՝		Ջուլիետ Համբարձումյան
քարտուղար՝ (ՄՀՄ)		Հայկ Խաչատրյան